Հաստատված է Գլխավոր տնօրենի
24/03/2022 թվականի թիվ 184 որոշմամբ

«ՄՈԳՈ»
ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ (ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ) ԳԼԽԱՎՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

մոգո

Սույն գլխավոր պայմանները, հրապարակված են «Մոգո» ՈւՎ Կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) պաշտոնական www.mogo.am կայքում (այսուհետ՝ Պայմաններ) և հանդիսանում են Կազմակերպությունից վարկ ստացած ֆիզիկական անձ վարկառուների (այսուհետ՝ Վարկառու) և Կազմակերպության միջև իրավական հարաբերությունները կարգավորող փաստաթուղթ՝ Վարկառուի և կազմակերպության միջև կնքված Վարկային Գլխավոր Պայմանագրի, Վարկային Համաձայնագրի և Գրավի Պայմանագրի հետ միասին:

Վարկի փաստացի ստացվելիք չափը սահմանվում է Վարկային Գլխավոր Պայմանագրով, իսկ հետագայում առավելագույն սահմանաչափի սահմաններում նոր վարկ ստանալու դեպքում՝ Վարկային Համաձայնագրով:

Սույն Պայմաններում և Վարկային պայմանագրերում երբ օգտագործվում է.

Պայմանագիր	ապա դա ներառում է ինչպես սույն Պայմանները, այնպես էլ Վարկառուի և կազմակերպության միջև կնքված Վարկային Գլխավոր Պայմանագիրը, Վարկային Համաձայնագիրը և Գրավի Պայմանագիրը՝ միասին, եթե համատեքստից ուղղակիորեն այլ բան չի բխում:
Կողմ	Վարկառուն կամ Վարկատուն կամ Գրավառուն կամ Գրավատուն
Կողմեր	Վարկառուն և Վարկատուն կամ Գրավառուն և Գրավատուն
Գրավատու	Վարկի ապահովման համար իրեն սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցը գրավ դրած անձ:
Եզակի ածականը	ապա, այն նշանակում է նաև հոգնակին, եթե համատեքստից ուղղակիորեն այլ բան չի բխում:

Սպասարկման Վճար	Կազմակերպության կողմից Վարկի սպասարկման համար գանձվող ամսական վճարը, որը սահմանվում է Վարկային պայմանագրով
Տարանցիկ Հաշիվ	«Արդշինբանկ» ՓԲ Ընկերությունում վարվող 2470103601360000 տարանցիկ հաշիվ
Վարկային պայմանագիր	Վարկային Գլխավոր Պայմանագիրը և (կամ) Վարկային Համաձայնագիրը

ՎԱՐԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

	Նպատակ	Ավտոմեքենայի ձեռք բերման կամ ընդհանուր սպառողական
1.	Առավելագույն սահմանչափ	Մինչև 20 միլիոն ՀՀ դրամ
2.	Առավելագույն ժամկետ	Մինչև 120 ամիս
3.	Արժույթ	ՀՀ դրամ
4.	Տոկոսադրույք	1. Սահմանվում է Գլխավոր Վարկային Պայմանագրով և (կամ) Վարկային Համաձայնագրով: 2. Տոկոսադրույքը հաշվարկվում է օրական կտրվածքով՝ Վարկառուին տրամադրված Վարկի մնացորդի վրա՝ սկսած Վարկի տրամադրման օրվանից՝ հիմք ընդունելով տարին՝ օրացուցային, բաժանարարը՝ 365 օր:
5.	Տոկոսների հաշվարկ	Տոկոսների հաշվարկն սկսվում է Վարկի գումարը փաստացի տրամադրելու կամ փաստացի կանխիկացնելու հնարավորության տրամադրման (Տարանցիկ հաշվում գտնվելու) օրվանից:
6.	Տարեկան փաստացի տոկոսադրույք	Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը հրապարակված է Կազմակերպության պաշտոնական www.mogo.am կայքում: Տոկոսադրույքը հաշվարկվում է օրական կտրվածքով՝ Հաճախորդին տրամադրված Վարկի մնացորդի վրա՝ սկսած Վարկի

տրամադրման օրվանից՝ հիմք ընդունելով տարին՝ օրացուցային, բաժանարարը՝ 365 օր:

Տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է Պայմանագրի գործողության ընթացքում փոփոխվել՝ կապված Վարկառուի կողմից Վարկը Վարկային Պայմանագրով սահմանված ժամկետներից շուտ մարելու, ինչպես նաև դրանց հաշվարկում ներառված տարրերի փոփոխությունից:

7. Տրամադրման եղանակ

1. Վարկը համարվում է տրամադրված Վարկառուի Բանկային Հաշվին, «Արդշինբանկ» ՓԲ Ընկերությունում վարվող Տարանցիկ Հաշվին փոխանցում կատարելուց հետո (Վարկի անկանխիկ տրամադրման եղանակը ընտրելու դեպքում) կամ Կազմակերպության մասնաճյուղերի դրամարկղերից (տվյալ մասնաճյուղում դրամարկղի առկայության դեպքում) կանխիկ եղանակով տրամադրման դեպքում:

2. Վարկի տրման ամսաթիվ է հանդիսանում Բանկային կամ Տարանցիկ Հաշվին գումարի փոխանցման կամ Կազմակերպության մասնաճյուղերի դրամարկղերից կանխիկով տրամադրման ամսաթիվը:

8. Մարման եղանակ

1. Վարկի մայր գումարը, տոկոսները, ամսական սպասարկման և այլ վճարները Վարկառուի կողմից կարող են մարվել կանխիկ կամ անկանխիկ եղանակով:

2. Վարկը Վարկառուի կողմից մարվում (վերադարձվում) է հավասարաչափ (անուիտետային) կարգով (ամսական կտրվածքով հավասարաչափ դրամական վճարումներով, որոնք ներառում են Վարկի մայր գումարը, տոկոսները, ամսական սպասարկման և այլ վճարները):

3. Կրեդիտի, տոկոսագումարների ամսական սպասարկման վճարների մարումը (վերադարձնելը) պետք է կատարվի (իրականացվի) Կազմակերպության բանկային հաշվին մուտք անելու միջոցով՝ կանխիկ կամ անկանխիկ եղանակով՝ համաձայն Վարկային Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Վարկի, տոկոսագումարների ամսական սպասարկման վճարների

մարման ժամանակացույցի (այսուհետ՝ «Մարման ժամանակացույց»):

4. Մարման ժամանակացույցը ձևավորվում է Վարկի տրամադրման պահին և ձևավորման պահից հանդիսանում է Վարկային Պայմանագրի անբաժանելի մաս:

5. Մարման ժամանակացույցը Վարկառուին տրամադրվում է Ընկերության տարածքում:

6. Վարկառուն պարտավոր է Վարկի գումարը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայանալ Կազմակերպություն և ստանալ Մարման ժամանակացույցը:

7. Վարկի տրամադրումից հետո Կազմակերպություն չներկայանալու և Մարման ժամանակացույցը սահմանված կարգով չստանալու հետ կապված բացասական հետևանքների ռիսկը կրում է Վարկառուն:

8. Վարկը, տոկոսագումարները և/կամ ամսական սպասարկման վճարները համարվում են մարված (վերադարձված) այն օրը (ամսաթվին), երբ Վարկառուն Կազմակերպության բանկային հաշվին գումար կմուտքագրի, որը կբավարարի այդ օրվա դրությամբ Վարկը մարելու (վերադարձնելու), տոկոսագումարները և ամսական սպասարկման վճարները վճարելու համար:

9. Այն դեպքում, երբ Վարկի, տոկոսագումարների և/կամ ամսական սպասարկման վճարների մարման ժամանակացույցում (գրաֆիկում) տեղի են ունենում փոփոխություններ՝ կապված Վարկառուի կողմից Վարկի վաղաժամկետ մարման և այլ հանգամանքների հետ, Վարկառուն պարտավոր է պարտավորությունները կատարել փոփոխված ժամանակացույցին համապատասխան: Նշված դեպքերում Վարկատուն Վարկառուի ցանկության դեպքում անվճար տրամադրում է Վարկի, տոկոսագումարների և/կամ ամսական սպասարկման վճարների մարման նոր ժամանակացույցը (գրաֆիկը): Մարման ժամանակացույցը չստանալու հետ

կապված բացասական հետևանքների ռիսկը կրում է Վարկառուն:

10. Այն դեպքում, երբ պարտավորությունների կատարման վերջնաժամկետը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա պարտավորությունները կարող են կատարվել հաջորդ աշխատանքային օրը:

11. Այն դեպքում, երբ պարտավորությունների հերթական կատարման ժամկետը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ և Վարկառուն ստանձնած պարտավորությունները կատարում է ոչ աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը, ապա Վարկային Պայմանագրով սահմանված տոկոսագումարները, Սպասարկման Վճարները և Պայմանագրից բխող այլ վճարները հաշվարկվում են Մարման ժամանակացույցով սահմանված վճարման օրվա համար ներառյալ:

9. Մարման հերթականություն

1. Եթե Վարկառուի դիմումի համաձայն և Կազմակերպության համաձայնությամբ դրամական պարտավորությունների մարման այլ հերթականություն չի սահմանվել, ապա Պայմանագրով նախատեսված դրամական պարտավորությունները լրիվ կատարելու համար վճարված գումարի անբավարարության դեպքում Վարկառուի պարտավորությունները մարվում են հետևյալ հերթականությամբ.

Ա. Առկայության դեպքում ի ապահովումն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման՝ գրավադրված գույքի վրա բռնագանձման գործընթացի հետ կապված Կազմակերպության կողմից կատարված ծախսերը և Պայմանագրի շրջանակներում ձևավորված Կազմակերպության նկատմամբ Վարկառուի այլ դեբիտորական պարտավորությունները,

Բ. Ժամկետանց սպասարկման վճարի վրա հաշվարկված (կուտակված) տուժանքի գումարը,

Գ. ժամկետանց տոկոսի վրա հաշվարկված (կուտակված) տուժանքի գումարը,

Դ. ժամկետանց Վարկի մայր գումարի վրա հաշվարկված (կուտակված) տուժանքի գումարը,

Ե. հաշվարկված (կուտակված), սակայն չվճարված ժամկետանց Սպասարկման Վճարը,

Զ. հաշվարկված (կուտակված), սակայն չվճարված ժամկետանց տոկոսագումարը,

Է. ժամկետանց Վարկի գումարը,

Ը. Վարկի օգտագործման համար հաշվարկված (կուտակված) ժամկետային սպասարկման վճար Սպասարկման Վճարը,

Թ. Վարկի օգտագործման համար հաշվարկված (կուտակված) ժամկետային տոկոսագումարը,

Ժ. Վարկի մայր գումարը:

2. Վարկը մարման ժամանակացույցով նախատեսված ամսաթվից շուտ մարվելու դեպքում մարումներն իրականացվում են Վարկառուի կողմից առաջարկած հերթականությամբ, իսկ եթե մարման հերթականություն չի առաջարկվում Վարկառուի կողմից, ապա մարված գումարը ուղղվում է մարման ժամանակացույցով նախատեսված հերթական մարմանը, իսկ գերազանցող մասը՝ ուղղվում մայր գումարի մարմանը:

3. Վարկառուի դրամական պարտավորությունները կարող են կատարվել նաև երրորդ անձանց կողմից:

10. Տրամադրման վճար — Սահմանվում է Վարկային Պայմանագրով:

11. Սպասարկման Վճար — 1. Սպասարկման Վճարի չափը սահմանվում է Վարկային Պայմանագրով:

2. Սպասարկման Վճարը հաշվարկվում է օրական կտրվածքով՝ նախորդ օրվա դրությամբ Վարկի

մնացորդային գումարի նկատմամբ՝ հիմք ընդունելով տարին՝ օրացուցային, բաժանարարը՝ 365 օր:

3. Սպասարկման Վճարի հաշվարկը սկսվում է Վարկի գումարը՝ փաստացի տրամադրելու կամ փաստացի կանխիկացնելու հնարավորության տրամադրման (Տարանցիկ հաշվում առկայության) օրվանից:

12. Լրացուցիչ տեղեկատվություն	Պայմանագրի գործողության ընթացքում Կազմակերպությունը Վարկառուից կարող է պահանջել իր համար ընդունելի ձևով և բովանդակությամբ լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:
13. Պարտադիր ներկայացման տեղեկատվություն	1. Կազմակերպությունը պարտավոր է ոչ պակաս, քան մեկամսյա պարբերականությամբ, Վարկառուին ներկայացնել օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված տեղեկատվությունը (այսուհետ՝ Պարտադիր ներկայացման տեղեկատվություն)՝ Վարկառուի էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով, եթե Վարկառուն չի հրաժարվել այդ տեղեկատվությունն էլեկտրոնային հասցեի միջոցով ստանալու իր իրավունքից, ինչպես նաև Վարկառուին տրամադրել օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված փաստաթղթերը: 2. Կազմակերպությունը պարտավոր է նաև Պարտադիր ներկայացման տեղեկատվությունում միակողմանիորեն փոփոխություն կատարելու դեպքում դրա վերաբերյալ տեղեկատվությունը Վարկառուին տրամադրել համապատասխան փոփոխության որոշման կայացումից հետո, սակայն ոչ ուշ, քան որոշումն ուժի մեջ մտնելուց 7 աշխատանքային օր առաջ, այլ դեպքերում՝ Պարտադիր ներկայացման տեղեկատվությունում կատարված փոփոխությունը Վարկառուին տրամադրել ոչ ուշ, քան համապատասխան փոփոխությունը տեղի ունենալուց և այդ մասին տեղեկանալուց 7 աշխատանքային օր հետո:
14. Մտածելու ժամանակ և վաղաժամ մարում	1. Վարկառուն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծել Պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ):

2. Վարկառուն իրավունք ունի նաև ժամկետից շուտ լրիվ կամ մասնակի մարել (վերադարձնել) Վարկը՝ փաստացի մարման (վերադարձման) օրվա դրությամբ հաշվարկված (կուտակված) տոկոսագումարների, տույժերի և տվյալ օրվա դրությամբ հաշվարկված ամսական սպասարկման վճարի հետ միասին՝ վաղաժամկետ մարման համապատասխան վճարը (առկայության դեպքում) կատարելու պայմանով:

15. Հատուկ պայման

Կողմերը հաստատում են, որ անկախ այլ հանգամանքներից և առանց սահմանափակելու Պայմանագրով նախատեսված Կողմերի որևէ իրավունքները, Վարկառուն իրավունք և հնարավորություն ունի Վարկային Պայմանագիրը ստորագրելուց հետո՝ 12-րդ (տասներկուերորդ) ամսում վերադարձնելու Վարկն ամբողջությամբ: Այն դեպքերում, երբ Պայմանագիրը կնքված է մի քանի տարով, սույն կետը կկիրառվի հաջորդող յուրաքանչյուր 12 (տասներկու) ամսվա ժամանակաշրջանի համար:

16. Գրավ

1. Վարկառուի պարտավորությունների կատարումն ապահովվելու է ավտոմեքենայի գրավով, որի վերաբերյալ կնքվում է համապատասխան գրավի պայմանագիր:

2. Գրավի առարկան Վարկառուի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման դեպքում չի անցնում Կազմակերպության տիրապետմանը:

3. Վարկառուի կողմից Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքերում գրավի առարկայի վրա կարող է բռնագանձում տարածվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Գրավով ապահովված պահանջի ծավալն իր մեջ ներառում է վարկի գումարը, վարկի գումարի օգտագործման դիմաց հաշվարկված տոկոսագումարները, սպասարկման և այլ վճարները, հաշվարկված տույժերը և տուգանքները, պատճառված վնասները, ինչպես նաև

գրավ դրված գույքը բռնագանձելու հետ կապված ծախսերը:

5. Գրավառուն իրավունք ունի.

Ա.Փաստաթղթային և բնաիրային եղանակով ցանկացած ժամանակ ստուգել Գրավատուի տիրապետման և օգտագործման ներքո թողնված Գրավի առարկայի առկայությունը և պահպանության պայմանները, այդ թվում ստուգելու Գրավի առարկայի գտնվելու վայրը, ինչի կապակցությամբ Գրավատուն, Գրավի Պայմանագրի ստորագրմամբ տալիս է իր անվերապահ համաձայնությունը և լիազորում է Գրավառուին իր անունից ՀՀ պետական բոլոր մարմիններից, այդ թվում նաև ՀՀ ԱԱԾ-ից և ՀՀ Ոստիկանությունից պարբերաբար կատարել հարցումներ և ստանալ տեղեկատվություն Գրավի առարկայի վերաբերյալ՝ այդ թվում նաև Գրավի առարկայի ՀՀ պետական սահմանը հատելու վերաբերյալ, թեկուզև նշված տեղեկատվությունը պարունակում է ՀՀ օրենսդրությամբ պահպանվող գաղտնի տեղեկատվություն,

Բ. Գրավատուից պահանջել Գրավի առարկայի ոչնչացմանը կամ վնասմանը հանգեցնող ցանկացած գործողության դադարեցում, Գրավի առարկայի պահպանման միջոցների ձեռնարկում

Գ. Գրավի առարկայի իրացումից ստացված գումարը՝ իր պահանջները չբավարարելու դեպքում, պակաս գումարը ստանալ Վարկառուի այլ գույքից,

Դ. Գրավի առարկան պատշաճ ձևով չպահպանելու, դրա կորստի կամ վնասվելու դեպքում, պահանջել Վարկառուից փոխարինել այն այլ գույքով

Ե. Գրավի առարկայի կորստի կամ վնասվածքի դեպքում ապահովագրական հատուցումից բավարարել իր պահանջները:

6. Գրավատուն պարտավոր է.

Ա. Գրավառուի ցանկությամբ, լրիվ արժեքով ապահովագրել Գրավի առարկան կորստյան և վնասվածքի ռիսկերից, ներկայացնել դրա հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը և նախատեսել, որ ապահովագրության պայմանները չեն կարող փոխվել առանց Գրավառուի նախնական համաձայնության,

Բ. Գրավառուին անհապաղ տեղեկացնել Գրավի առարկայի կորստյան կամ վնասվածքի սպառնալիքի ծագման մասին,

Դ. Առանց Գրավառուի գրավոր համաձայնության չօտարել, վարձակալության կամ այլ ձևով տիրապետման չհանձնել Գրավի առարկան երրորդ անձանց,

Ե. Գրավի առարկայի ՀՀ պետական սահմանը հատելուց առաջ անհրաժեշտ է ստանալ Գրավառուի գրավոր համաձայնությունը,

Զ. Գրավի առարկայի գրավով ապահովված պարտավորությունը Վարկային պայմանագրով սահմանված կարգով պատշաճ չկատարելու դեպքում Գրավառուի կողմից առանց դատարան դիմելու կարգով Գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու վերաբերյալ բռնագանձման ծանուցումը ստանալուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում Գրավի առարկան իր պատկանելիքներով (փաստաթղթեր և այլն) հանձնել Գրավառուի տիրապետմանը և պահպանմանը՝ այդ մասին ստորագելով Գրավի առարկան Գրավառուի տիրապետմանը հանձնելու մասին հանձնման-ընդունման ակտ,

Է. Ձեռնարկել բոլոր միջոցները Գրավի առարկայի պահպանման համար՝ ներառյալ երրորդ անձանց ոտնձգություններից և պահանջներից այն պաշտպանելու համար, կատարել ընթացիկ և հիմնական վերանորոգում, թույլ չտալ գրավի առարկայի փչացում կամ քայքայում, հակառակ դեպքում փոխարինել համարժեք այլ գույքով,

Ը. Չխոչընդոտել Գրավառուին ստուգելու Գրավի առարկայի առկայությունը, վիճակը և պահպանման մյուս պայմանները,

Թ. Գրավառուին ներկայացված փաստաթղթերի ու տվյալների մեջ արտացոլել հավաստի և արժանահավատ տեղեկություններ,

Ժ. Գրավի պայմանագիրը կնքելու պահին իր մասի Գրավառուին ներկայացված տվյալների մեջ կատարված յուրաքանչյուր փոփոխության մասին անհապաղ գրավոր տեղեկացնել Գրավառուին:

7. Եթե գրավ դրված գույքն իրացնելուց ստացված գումարը կամ Կազմակերպության կամ նրա նշած անձին ի սեփականություն անցած գույքի արժեքը բավարար չէ Կազմակերպության պահանջները բավարարելու համար, Կազմակերպությունը՝ Վարկառուի պարտավորությունների մասնակի մարման դեպքում իրավունք ունի բավարարում ստանալ Վարկառուի այլ գույքի (գույքերի) հաշվին:

8. Գրավի առարկան արտադատական կարգով իրացնելու դեպքում առաջացած հնարավոր ծախսերը կրում է Վարկառուն: Կազմակերպության կողմից այդ ծախսերը կրելու դեպքում Վարկառուն պարտավոր է Կազմակերպությանը փոխհատուցել կրած ծախսերը:

9. Գրավ դրված գույքի արտադատական կարգով բռնագանձման արդյունքում Կազմակերպության սեփականությանը անցած գրավ դրված գույքի օտարման արդյունքում ֆիզիկական անձի եկամուտների վճարման օր և օտարման գին են համարվում Կազմակերպությանը ի սեփականություն անցնելու օրը և անկախ գնահատողի կողմից որոշված շուկայական գինը:

10. Գրավի առարկան հրապարակային սակարկություններով իրացնելու դեպքում այն իրացվում է Գրավառուի նշած անձի (Աճուրդի կազմակերպիչ) կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Աճուրդի համար մեկնարկային գինը

որոշվում է շուկայական արժեքով՝ այդ պահի դրությամբ վեց ամսից պակաս վաղեմություն ունեցող գնահատման հիման վրա՝ իրականացված Գրավառուի համար ընդունելի անկախ գնահատողի կողմից: Ուղղակի վաճառքի դեպքում Գրավի առարկայի իրացման համար հիմք է ծառայում գոյություն ունեցող շուկայական արժեքը, որը որոշվում է այդ պահի դրությամբ վեց ամսից պակաս վաղեմություն ունեցող գնահատման հիման վրա՝ իրականացված Գրավառուի համար ընդունելի անկախ գնահատողի կողմից: Ընդ որում, ուղղակի վաճառքի դեպքում Գրավատուն ունի նախապատվության իրավունք՝ Գրավի առարկան ձեռք բերել ամբողջ պարտավորության գումարի չափով: Ուղղակի վաճառքի մեկնարկային օրվանից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում այն տեղի չունենալու դեպքում Գրավառուն իրավունք ունի գույքի վաճառքն իրականացնել շուկայական արժեքից ավելի ցածր արժեքով: Ընդ որում, յուրաքանչյուր 10 (տասը) օրացուցային օր պարբերականությամբ գույքի վաճառքի հայտարարվող արժեքի առավելագույն իջեցումը սահմանվում է 10%: Ընդ որում՝ վաճառվող գույքի հայտարարվող արժեքը բոլոր իջեցումներից հետո չի կարող ավելի փոքր լինել վաճառքի պահին առկա ընդհանուր պարտավորությունից:

11. Գրավի առարկայի իրացումից ստացված գումարից՝ դրա վրա բռնագանձում տարածելու և իրացնելու հետ կապված ծախսերը վճարելու համար անհրաժեշտ գումարները պահելուց հետո, բավարարվում են Վարկային պայմանագրով նախատեսված Գրավառուի պահանջները, իսկ մնացած գումարը տրվում է Գրավատուին:

12. Ծախսերի վճարումը և վնասների հատուցումը չի ազատում Գրավատուին Պայմանագրով սահմանված հիմնական պարտավորությունների կատարումից:

17. Վարկառուի պատասխանատվությունը

1. Սպասարկման վճարը Մարման ժամանակացույցում նշված ժամկետներին չվճարելու դեպքում Վարկառուն Կազմակերպությանը վճարում է տույժ՝ չվճարված սպասարկման վճարի 0,13 տոկոսի չափով՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար:

2. Տոկոսագումարները Մարման ժամանակացույցում նշված ժամկետներին չվճարելու դեպքում Վարկառուն Կազմակերպությանը վճարում է տույժ՝ չվճարված տոկոսագումարի 0,13 տոկոսի չափով՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար:

3. Վարկառուի կողմից Մարման ժամանակացույցով նախատեսված ժամկետները խախտելու դեպքում Վարկի ժամկետանց մասի նկատմամբ հաշվարկվում է տույժ՝ 0,13 տոկոսի չափով՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար:

4. Տույժերի վճարումը Վարկառուին չի ազատում Պայմանագրով ստանձնած պարտավորությունները ամբողջովին ու պատշաճ կատարելու պարտականությունից:

5. Վարկառուն պատասխանատու է օրենսդրությամբ և Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար անկախ մեղքի առկայությունից բացառությամբ օրենքով և (կամ) Պայմանագրով նախատեսված դեպքերի:

6. Տուժանքի վճարումը Վարկառուին չի ազատում Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելուց:

18. Պարտավորության կատարման արագացում (acceleration)

1. Սույն բաժնում նշված դեպքերում Կազմակերպությունն իր հայեցողությամբ կարող է Վարկառուին նախապես տեղեկացնելով, ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվել Վարկը տրամադրելուց և (կամ) վաղաժամկետ միակողմանիորեն լուծելով Պայմանագիրը կամ առանց այն վաղաժամկետ միակողմանիորեն լուծելու՝ Վարկառուից պահանջել վերադարձնել Վարկը, վճարման օրվա դրությամբ հաշվարկված տոկոսները, տույժերը և տվյալ օրվա դրությամբ հաշվարկված ամսական սպասարկման վճարները, եթե՝

Ա. Վարկառուն չի կատարել կամ անպատշաճ է կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, կամ Կազմակերպության ծանուցման (ծանուցագրերի)

պահանջները, կամ Պայմանագրով կամ օրենքով սահմանված ցանկացած այլ պարտավորություն, կամ

Բ. Կազմակերպության կարծիքով Վարկառուն ի վիճակի չի լինի ժամանակին վճարել Կազմակերպությանը ունեցած պարտքերը, կամ որևէ իրավական գործընթաց է սկսվել, որի արդյունքում Վարկառուի ակտիվները կամ դրանց մի մասը պետք է կամ կարող են փոխանցվել երրորդ անձանց, կամ առկա է գործընթաց, որի ընթացքում վիճարկվում է Գրավի և (կամ) Գրավի նկատմամբ Կազմակերպության և (կամ) Գրավատուի իրավունքները, կամ նրա ակտիվների (գույքի) կամ դրանց մի մասի վրա օրենքով սահմանված կարգով կալանք կամ արգելանք է դրվել կամ կա դրանց բռնագանձման ռիսկ, կամ

Գ. դատարանը Վարկառուին ճանաչել է սնանկ (անվճարունակ) կամ նրա նկատմամբ սկսվել է սնանկության վարույթ, կամ

Դ. Վարկառուի դեմ հարուցվել է քաղաքացիական, քրեական կամ վարչական գործեր, վարչական և այլ վարույթներ, կամ

Ե. Վարկառուն կետանցված/չկատարված պարտավորություններ ունի Կազմակերպության, այլ անձանց, պետական կամ համայնքային բյուջեների հանդեպ, կամ

Զ. Վարկի սպասարկման ընթացքում հայտնաբերվել են Վարկառուի կողմից տրամադրված կեղծ կամ մոլորեցնող կամ անարժանահավատ տեղեկություններ, կամ

Է. արժեզրկվել է գրավադրված գույքը, կամ

Ը. Կազմակերպության կարծիքով Վարկառուի ֆինանսական վիճակը վատթարացել է կամ առկա են նման միտումներ, որոնք կասկածի տակ են դնում վարկային պարտավորությունների պատշաճ և ամբողջական կատարումը, կամ

Թ. Վարկառուն խախտել է Կազմակերպության հետ կնքած այլ գործարքներից ծագած պարտավորությունները:

2. Սույն բաժնում նշված Վարկառուի կողմից թույլ տրված խախտումները և հանգամանքների փոփոխությունները Կազմակերպության համար ճանաչվում են էական: Նշված հանգամանքներն ի հայտ գալու պահից Կազմակերպությունն իրավունք ունի պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարում պահանջել Վարկառուից անկախ նրանից, վաղաժամկետ կատարում պահանջելու պահին թույլ տրված խախտումները վերացվել են, թե ոչ:

3. Սույն բաժնում նշված հանգամանքներն ի հայտ գալու դեպքում Կազմակերպությունը գրավոր ծանուցում է Վարկառուին՝ պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարման (ներառյալ տոկոսագումարների, տույժերի և տվյալ օրվա դրությամբ հաշվարկված ամսական սպասարկման վճարի վճարման) մասին:

4. Վարկառուն պարտավոր է Պայմանագրով ստանձնած պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարման պահանջի վերաբերյալ Կազմակերպության ծանուցումն ստանալուց հետո 7 օրվա ընթացքում, եթե Կազմակերպության ծանուցմամբ այլ ժամկետ չի սահմանվում, առանց որևէ հրաժարումների ամբողջությամբ վաղաժամկետ մարել (վերադարձնել) տրված, սակայն չվերադարձված Վարկն ամբողջությամբ՝ փաստացի մարման (վերադարձման) օրվա դրությամբ հաշվարկված (կուտակված) տոկոսագումարների, տուժանքի և տվյալ օրվա դրությամբ հաշվարկված ամսական սպասարկման վճարի հետ միասին: Եթե Վարկառուն այդ ժամկետում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարման Ընկերության պահանջը չի կատարում կամ կատարում է անպատշաճ, ապա բոլոր վճարները՝ ներառյալ Վարկը, հաշվարկված (կուտակված) տոկոսագումարները և ամսական սպասարկման վճարները, ամբողջությամբ համարվում են ժամկետանց, իսկ Պայմանագրով ստանձնած պարտավորությունները

խախտված, որոնց համար Վարկառուն պատասխանատվություն է կրում Պայմանագրով սահմանված կարգով, պայմաններով ու չափերով:

19. Հավաստիացումներ և երաշխավորություններ

1. Վարկային պայմանագիրը ստորագրելու փաստի ուժով Վարկառուն (այդ թվում Գրավատուն) երաշխավորում և հավաստիացնում է, որ պայմանագիրը կամ համաձայնագիրը ստորագրելու պահին՝

Ա. չի գտնվում անվճարունակության (սնանկության) գործընթացում, Վարկառուի և/կամ Գրավատուի մոտ առկա չեն սնանկության հատկանիշներ,

Բ. օժտված է համապատասխան իրավունքներով՝ իր ակտիվները կառավարելու և տնօրինելու, իր գործունեությունը ծավալելու և սահմանված պարտավորությունները ստանձնելու համար,

Գ. Կազմակերպությանը բացահայտել է վերջինիս կողմից Վարկը տրամադրելու վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ և պահանջված ամբողջ տեղեկատվությունը, ինչպես նաև Կազմակերպությանը տրամադրված ամբողջ տեղեկատվությունը դրա տրամադրման պահին եղել է ճիշտ և ամբողջական,

Դ. երրորդ անձանց նկատմամբ չունի վարկի/փոխառության, երաշխիքի, երաշխավորության կամ որևէ այլ այնպիսի պայմանագրային կամ արտապայմանագրային պարտավորություններ, որոնց մասին չի տեղեկացրել Կազմակերպությանը,

Ե. երրորդ անձանց հանդեպ չի ստանձնել լրացուցիչ պարտավորություններով չծանրաբեռնվելու պարտավորություն, իսկ նման պարտավորություն ստանձնած լինելու դեպքում փաստացի ստացել է երրորդ անձի անվերապահ համաձայնությունը,

Զ. ներգրավված չէ այնպիսի դատական, արբիտրաժային կամ արտադատական այլ գործընթացում, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության նկատմամբ իր ստանձնած պարտավորությունների դիմաց

բավարարում ստանալու Կազմակերպության հնարավորություն վրա,

Է. Վարկը ստանալու և պատշաճ սպասարկելու կապակցությամբ ստացել է իր ամուսնու անվերապահ համաձայնությունը (ամուսնացած լինելու դեպքում),

Ը. Ամուսնական պայմանագիր կնքած լինելու դեպքում կամ հետագայում նման պայմանագիր կնքելու դեպքում Վարկի սպասարկումը ինչպես նաև տվյալ Վարկով ձեռք բերվելիք մեքենան հանդիսանալու է բացառապես իր սեփականությունը:

2. Վարկառուն/Գրավատուն պարտավորվում է Կազմակերպությանը անհապաղ տեղեկացնել ներկայացված հավաստիացումներում կամ երաշխիքներում փոփոխությունների առաջացման մասին և Կազմակերպության պահանջով ներկայացնել փոփոխությունների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. Վարկառուն/Գրավատուն նաև գիտակցում ու համաձայն է, որ եթե ստած լինի Կազմակերպությանը կամ ներկայացրած լինի կեղծ կամ անարժանահատ տեղեկություններ, ապա Կազմակերպությունը կարող է ըստ իրավիճակի և իր ընտրությամբ.

Ա. Մերժել Վարկի տրամադրումը.

Բ. Լուծել Պայմանագիրը.

Գ. Պահանջել ժամանակից շուտ ետ վերադարձնել Վարկը.

Դ. Վարկառուի/Գրավատուի հետ այլևս չկնքել գործարքներ.

Ե. Վարկառուի անբարեխղճության մասին տեղեկացնել այլ ֆինանսական կազմակերպություններին

20. Գաղտնիություն

1. Կազմակերպությունը տալիս է իր համաձայնությունը գաղտնի պահելու մյուս Կողմին վերաբերող գաղտնի

տեղեկատվությունը, որը նա ստացել է որպես սույն պայմանագրի Կողմ (այսուհետ՝ «Գաղտնի Տեղեկություն») և ապահովելու, որ ողջ այդպիսի տեղեկատվությունը չբացահայտվի որևէ երրորդ անձի:

2. Գաղտնի Տեղեկությունն իր մեջ չի ներառում որևէ տեղեկություն, որն, ընդհանուր առմամբ, հասանելի է կամ հասանելի է դառնում հանրությանն այլ կերպ, քան Կազմակերպության կողմից Պայմանագրի խախտման հետևանքով:

3. Սույն մասը չպետք է կանխի Գաղտնի Տեղեկության հրապարակումը.

Ա. այնքանով, որքանով հրապարակումը պահանջվում է կիրառելի օրենքով կամ իրավասու դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի օրինական պահանջով,

Բ. եթե Կազմակերպության կողմից այդպիսի հրապարակումը կատարվել է մյուս Կողմի հետ որևէ վեճի ընթացքում՝ Պայմանագրով իրեն վերապահված որևէ իրավունքի պահպանման կամ իրականացման կամ իրեն հասանելիք ցանկացած գումարի ստացման նպատակով, կամ

Գ. աուդիտորներին, փաստաբաններին, աշխատողներին, խորհրդատուներին, գործակալներին և ներկայացուցիչներին, որոնց անհրաժեշտ է իմանալ այդ տեղեկությունը՝ իրենց համապատասխան գործառույթների իրականացման անհրաժեշտությունից ելնելով.

Դ. եթե տեղակատվությունը տրամադրվում է Պայմանագրով ստանձնած Վարկառուի պարտավորությունների կատարման ապահովում տրամադրած երրորդ անձին (անձանց)՝ գրավատու(ներ)ին, երաշխավոր(ներ)ին և այլն,

Ե. եթե տեղակատվությունը տրամադրվում է ֆինանսավորող կամ վերաֆինանսավորող

կազմակերպություններին, և վերջիններիս կողմից նշված անձանց,

Զ. եթե տեղեկատվությունը տրամադրվում է Պայմանագրի հիման վրա Կազմակերպությանը պատկանող իրավունքը (պահանջը) այլ անձի փոխանցելիս (զիջելիս) այդ իրավունքը ձեռք բերող անձին.

Է. Վարկային պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

21. Կիրառելի իրավունք

Կողմերի վարկային և գրավի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

22. Անհաղթահարելի ուժ

1. Կողմերն ազատվում են օրենքով և (կամ) Պայմանագրով նախատեսված պատասխանատվությունից, այն դեպքում, երբ իրենց՝ Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարումը հետևանք է անհաղթահարելի ուժի ազդեցության:

2. Պայմանագրի իմաստով անհաղթահարելի ուժի ազդեցություն են համարվում բնական ու տարերային աղետները, պատերազմն ու ռազմական գործողությունները, զանգվածային անկարգությունները, զանգվածային գործադուլները, համաճարակները, ինչպես նաև սույն պայմանագրի կնքման ու կատարման ընթացքում տվյալ Կողմի կողմից այլ անկանխատեսելի, անկառավարելի ու անկանխարգելելի իրադարձությունները, որոնք խելամտորեն թույլ չեն տալիս Կողմին պատշաճորեն կատարել իրենց վրա՝ Պայմանագրով ու օրենսդրությամբ դրված պարտականությունները:

3. Անհաղթահարելի ուժի ազդեցության առկայությամբ պայմանավորված՝ Կողմը պարտավոր է պայմանագրի մյուս կողմերին գրավոր ծանուցել ու բացատրել անհաղթահարելի ուժի առկայության ու դրա այն հետևանքների մասին, որոնք իրեն խելամտորեն հնարավորություն չեն ընձեռնում կատարել կամ

պատշաճ կերպով կատարել սույն պայմանագրով իր ստանձնած պարտավորությունները:

4. Վեճի առկայության դեպքում անհաղթահարելի ուժի առկայության ու դրա բացասական հետևանքների իրավական գնահատականը տալիս է առևտրային արբիտրաժը:

23. Փոխանցում

1. Պայմանագրից բխող բոլոր իրավունքներն ու պարտականությունները կամ դրանց մի մասը Կազմակերպությունն իրավունք ունի զիջելու կամ փոխանցելու այլ անձի՝ առանց մյուս Կողմի նախնական համաձայնության, պայմանով, որ նման փոխանցում կամ զիջում իրականացնելու դեպքում Ցեսիոնարը կամ Ցեդենտը պարտավորված կլինի այդ մասին գրավոր՝ թղթային և/կամ էլեկտրոնային եղանակով ծանուցել մյուս Կողմին՝ փոխանցման կամ զիջման գործողությանը հաջորդող 10 (տասը) օրացույցային օրվա ընթացքում: Սույն բաժնով նախատեսված ծանուցմամբ Ցեսիոնարը կամ Ցեդենտը պետք է նաև հավաստի, որ այն անձը, որին փոխանցվել է Պայմանագրից ծագած որևէ իրավունք (կամ դրա մասը), պատշաճ կերպով ու անվերապահ ստանձնել է համապատասխան իրավունքներն ու պարտականությունները:

2. Վարկառուն իրավունք չունի Պայմանագրով ստանձնած իր պարտավորություններն առանց Կազմակերպության նախնական գրավոր համաձայնության փոխանցել այլ անձի:

24. Լեզու

1. Պայմանագիրը կազմվել ու կնքվում է հայերեն:

2. Պայմանագրի հետ կապված բոլոր փաստաթղթերը և հաղորդակցությունը կազմվում և ուղարկվում են հայերենով:

25. Անվավերություն

Պայմանագրի որևէ դրույթի անվավերությունը չի հանգեցնում Պայմանագրի այլ դրույթների անվավերության: Նման հանգամանքի ի հայտ գալու դեպքում, Պայմանագիրը պետք է հասկացվի և

մեկնաբանվի այնպես, ինչպես եթե այդ դրույթները չհանդիսանային Պայմանագրի բաղկացուցիչ մաս:

26. Վեճերի լուծումը

1. Պայմանագրի կապակցությամբ ծագող բոլոր վեճերը, տարաձայնությունները և (կամ) պահանջները, ներառյալ՝ դրանց կատարմանը, խախտմանը, դադարեցմանը կամ անվավերությանը վերաբերող, ենթակա են կարգավորման արբիտրաժային կարգով, եթե հաճախորդի կողմից չի ընտրվել վեճերի լուծման այլ տարբերակ:

2. Բոլոր վեճերի լուծումը, բացառելով ընդհանուր իրավասության դատարանների ենթակայությունը, հանձնվում է «ԱՐԲԻՏՐԱԺ» ՍՊ Ընկերության մշտապես գործող Արբիտրաժային դատարանին (այսուհետ՝ Արբիտրաժային Դատարան):

3. Արբիտրաժային Դատարանում գործի քննությունը իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին և Արբիտրաժային Դատարանի կանոնակարգին համապատասխան:

4. Արբիտրաժային Դատարանի կանոնակարգը տեղակայված է վերջինիս պաշտոնական ինտերնետային www.arb.am կայքում:

5. Սույնով Կողմերը հավաստիացնում են, որ ծանոթ են Արբիտրաժային Դատարանում գործերի քննության ընթացակարգին:

6. Կողմերը սահմանում են, որ Արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է Արբիտրաժային Դատարանի կանոնակարգին համապատասխան:

7. Վեճերի քննությունն իրականացվում է գրավոր նյութերի հիման վրա,առանց բանավոր քննության անցկացման, բացառությամբ «Արբիտրաժային դատարանի կանոնակարգով» նախատեսված դեպքերի՝ ՀՀ նյութական իրավունքի նորմերին համապատասխան:

8. Արբիտրաժային դատավարության լեզուն հայերենն է, Արբիտրաժի վայրը՝ ՀՀ, ք. Երևանը:

9. Վեճերը, տարաձայնությունները և (կամ) պահանջները արբիտրաժային կարգով լուծելու Պայմանագրով նախատեսված պայմանավորվածությունը չի կարող խոչընդոտ հանդիսանալ գրավի առարկան արտադատական կարգով օտարելու/իրացնելու Գրավառուի իրավունքի իրականացմանը կամ մեկնաբանվել որպես նման իրավունքը սահմանափակող նորմ:

27. Ֆինանսական համակարգի հաշտարար

1. Վարկառուն հնարավորություն ունի Պայմանագրից բխող բողոք-պահանջները ներկայացնել ՀՀ Ֆինանսական համակարգի հաշտարարին՝ օրենքով սահմանված կարգով:

2. Վարկառուն սույնով տեղեկացված է, որ Կազմակերպությունը չի հրաժարվել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իր իրավունքից: Դա նշանակում է, որ Կազմակերպությունը կարող է որոշ դեպքերում դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից իր դեմ կայացված որոշումները:

28. Ծանուցումներ

1. Կողմի կողմից տրված որևէ ծանուցում պետք է կազմված լինի գրավոր ձևով և ստորագրված՝ ուղարկող Կողմի անունից գործելու համար լիազորված անձի կողմից: Այդպիսի ծանուցումը կհամարվի պատշաճ տրված, եթե առաքվել է էլեկտրոնային փոստով՝ Վարկային Պայմանագրում Կազմակերպության, Վարկառուի կամ Գրավատուի նշված էլեկտրոնային փոստի հասցեին պայմանով, որ եթե էլեկտրոնային փոստով փոխանցումն իրականացվում է սովորական աշխատանքային ժամերից դուրս, ծանուցումը կհամարվի ստացված հաջորդ աշխատանքային օրվա ժամը 10:00-ին

2. Կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է սույն հոդվածով սահմանված կարգով մյուս Կողմերին տեղեկացնել իր և՛ էլեկտրոնային փոստի հասցեի, և՛ այլ

ռեկվիզիտների փոփոխության մասին: Հակառակ դեպքում համապատասխան հաղորդակցության և ծանուցման ուղարկումը պայմանագրերում նշված իրենց համապատասխան հասցեին կհամարվի պատշաճ ծանուցում:

3. Այն դեպքում, երբ Կողմի էլեկտրոնային փոստին ուղարկվել է որևէ ծանուցում, ապա տվյալ Կողմը չի կարող իր գործողությունը կամ անգործություն հիմնավորել մյուս Կողմ(երի) առաքած էլեկտրոնային նամակը չկարդալով կամ չստանալով:

4. Կողմերն Պայմանագրի կնքմամբ անհետկանչելիորեն ընդունում են, որ սույն բաժնով նկարագրված հաղորդակցությունն ու ծանուցումն իրենց միջև կհամարվի պատշաճ հաղորդակցություն ու ծանուցում:

5. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 330.1 հոդվածի 7-րդ մասի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասերի համաձայն՝ դատարանը, արբիտրաժային դատարանը, ինչպես նաև պետական մարմինները կարող են Կողմի պահանջով սույն պայմանագրից բխող վեճերի լուծման կամ իրավունքների ու պարտականությունների իրականացման ժամանակ կիրառել սույն կետով սահմանված ծանուցման կարգը:

29. Պայմանների փոփոխությունը

1. Կազմակերպությունը կարող է որևէ ժամանակ միակողմանիորեն, առանց նախապես ստանալու Վարկառուի կամ Գրավատուի համաձայնությունը փոխել և (կամ) լրացներ սույն Պայմաններն ամբողջությամբ, կամ դրանցում ներարված որևէ դրույթ:

2. Կատարված փոփոխությունը կամ լրացումը կամ Պայմանների նոր խմբագրությունն ուժի մեջ է մտնում Կազմակերպության պաշտոնական www.mogo.am կայքում հրապարակվելու պահից 7 աշխատանքային օր հետո:

30. Վավերապայմանների փոփոխություն	Վարկառուն/Գրավատուն պարտավորվում է իր վերաբերյալ Վարկային և (կամ) Գրավի պայմանագրում նշված որևէ վավերապայմանի փոփոխության դեպքում, այդ փոփոխությունը կատարվելուց հետո եռօրյա ժամկետում տեղեկացնել Կազմակերպությանը: Չտեղեկացնելու բացասական հետևանքների ռիսկը կրում է Վարկառուն/Գրավատուն: